ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«06» մայիսի 2016 թվական N 88–Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ՝ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻՑ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 4-րդ և 8-րդ կետերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Անվանափոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող Աբովյան փողոցի Վարդանանց հրապարակից Շիրազի փողոց ընկած հատվածը ՝ «***Քրոք Քրոքորյան***» փողոցի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնին՝ իրականացնել անհրաժեշտ գործողություններ կապված փողոցի անվանափոխման հետ այդ թվում նաև անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման աշխատանքները:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնին՝ ապահովելու անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացվող ակտերի:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար:
5. Սույն որոշմամբ կատարված փողոցի անվանափոխման վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության «Կումայրի» բաժնին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության «Կումայրի» անձնագրային բաժանմունքին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանմանը և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդ օրվանից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան ____________

Ա. Բաղդամյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ն. Մեսրոպյան ____________

Ռ.Մխիթարյան ____________

Ե. Պողոսյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«06» մայիսի 2016 թվական N 94-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ N 4/19 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասի ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 26042016-08-0024) Սայաթ-Նովայի փողոց N 4/19 հասցեի 0,00444 (զրո ամբողջ չորս հարյուր քառասունչորս հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել 1 (մեկ) տարի ժամկետով՝ բացօթյա սրճարան տեղադրելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան __________

Ա. Բաղրամյան __________

Մ. Գաբոյան __________

Ա.Գրիգորյան __________

Վ. Եղիգարյան __________

Գ. Թաթարյան __________

Մ. Գաբոյան ____________________

Ա.Գրիգորյան ____________________

Վ. Եդիգարյան ____________________

Գ. Թաթարյան ____________________

Հ. Խաչատրյան ____________________

Տ.Հովհաննիսյան ____________________

Վ. Հունանյան ____________________

Ն. Մեսրոպյան ____________________

Ռ.Մխիթարյան ____________________

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

Տ. Փանոսյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«06» մայիսի 2016 թվական N 89–Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ) ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2.1-ին ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու (Մայր աթոռ Սուրբ էջմիածին) Շիրակի թեմի առաջնորդի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016 թվականի հունվարի 19-ին N 612 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականն N 17032016-08-0059) Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 10/1 հասցեի 0,457 (զրո ամբողջ չորս հարյուր հիսունյոթ հազարերորդական) հեկտար մակերեսով, 08-001-0125-0107 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի հողերի խառը կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն (Մայր աթոռ Սուրբ էջմիածին)՝ եկեղեցի կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման ծախսերը կատարել Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու (Մայր աթոռ Սուրբ էջմիածին) միջոցների հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան ______________

Ա. Բաղդամյան ______________

Մ. Գաբոյան ______________

Ա.Գրիգորյան ______________

Վ. Եղիգարյան ______________

Գ. Թաթարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ն. Մեսրոպյան ____________

Ռ.Մխիթարյան ____________

Ե. Պողոսյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

**«06» մայիսի 2016 թվական N 90-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ N 40/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածովի 1-ին մասի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 9-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի փոփոխման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալի 2015 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/11.2/4906-15 գրությունն ու քաղաքացի Գևորկ Ֆարզադյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016 թվականի ապրիլի 19-ի N 4632 թվագրմամբ) ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Փոփոխել քաղաքացի Գևորկ Գրիգորի Ֆարզադյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12052015-08-0011) Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոց N 40/3 հասցեի 0,09528 (զրո ամբողջ ինը հազար հինգ հարյուր քսանութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի (կադաստրային ծածկագիր 08-001-1226-0009) նպատակային և գործառնական նշանակությունը: Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակությունից տեղափոխել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության հետ կապված գործառույթներն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը ներկայացնել տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան ______________

Ա. Բաղրամյան ______________

Մ. Գաբոյան ____________________

Ա.Գրիգորյան ____________________

Վ. Եդիգարյան ____________________

Գ. Թաթարյան ____________________

Հ. Խաչատրյան ____________________

Տ.Հովհաննիսյան ____________________

Վ. Հունանյան ____________________

Ն. Մեսրոպյան ____________________

Ռ.Մխիթարյան ____________________

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

Տ. Փանոսյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«06» մայիսի 2016 թվական N 91-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 87-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 75-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոցի N 2 շենքի N 36 բնակարանը «Բարձրաբերդ» համատիրությանն անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 87-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| **Կողմ (14)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ(0)** |
|---|---|---|

Գ. Ադամյան ________

Ա. Բաղրամյան ________

Մ. Գաբոյան ________

Ա.Գրիգորյան ________

Վ. Եդիգարյան ________

Գ. Թաթարյան ________

Հ. Խաչատրյան ________

Տ.Հովհաննիսյան ________

Վ. Հունանյան ________

Ն. Մեսրոպյան ________

Ռ.Մխիթարյան ________

Ե. Պողոսյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«06» մայիսի 2016 թվական N 92-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 162 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2490014 վկայական) Շիրակացի փողոց N 162 հասցեի շենքից առանձնացված մասը՝ 164,05 (մեկ հարյուր վաթսունչորս ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը և 37,86 (երեսունյոթ ամբողջ ութսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքը, մրցույթով տրամադրել վարձակալության՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ բժշկական ծառայություն կազմակերպելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ ամսական 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( 14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Գ. Թաթարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ն. Մեսրոպյան ____________

Ռ.Մխիթարյան ____________

Ե. Պողոսյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«06» մայիսի 2016 թվական N 93-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 5/4 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14112014-08-0029) Ղանդիլյան փողոց N 5/4 հասցեի 3617,49 (երեք հազար վեց հարյուր տասնյոթ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 0,834831 (զրո ամբողջ ութ հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր երեսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցույթով տրամադրել վարձակալության՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Վարձավճարի մեկնարկային չափ սահմանել սույն որոշման 1-ին կետում նշված.
   1) շինությունների համար՝ ամսական 60000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,
   2) հողամասի համար՝ ամսական 30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանել, որ.

1) վարձակալը պարտավոր է երկու տարվա ընթացքում կատարել ֆինանսական ներդրումներ՝ շինությունների ամրացման, վերակառուցման համար՝ նախօրոք կազմված և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայն,

2) ներդրումները լրիվ ծավալով իրականացնելուց հետո՝ գույքի օտարման դեպքում վարձակալին տրվում է գնման նախապատվության իրավունք,

3) շինությունների պահպանման, սպասարկման, շահագործման և երկկողմ պարտավորություններն ու իրավունքները մանրամասնվում է վարձակալության պայմանագրով:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան ____________

Ա. Բաղդամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Գ. Թաթարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ն. Մեսրոպյան ____________

Ռ.Մխիթարյան ____________

Ե. Պողոսյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**«06» մայիսի 2016 թ.**